ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
VIII Ա դասարանի նախագծային ուսուցման
Հայոց պատմություն առարկայից
Ուսուցչուհի՝ Շահանե Հարությունյան

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VIII Ա դասարանի աշակերտների հետ՝

1.Միլենա Իսախանյան
2.Էլեն Անդրեասյան
3.Ավետ Խաչատրյան
4.Աննա Գալստյան
5.Գոռ Ավագյան
6.Սուրեն Մանուկյան
7.Դավիթ Բաքոյան
8.Մանե Ավագյան
9.Ալեքս Թադևոսյանը
10.Մարի Եղիազարյան
11.Մանուկ Մանուկյան

2024թվականի սեպտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ նախագծային ուսուցում «Միջնադարյան Հայաստանի քաղաքները՝ պաշտպանական ու մշակութային կենտրոններ» թեմայով: Մեր նպատակն էր ուսումնասիրել միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունը, նրանց պաշտպանական ու մշակութային դերը, և ձեռք բերված գիտելիքների հիման վրա ստեղծել մոդելային մակետ:

Նախագիծն իրականացնելու համար նախատեսված էր 6 շաբաթ:Աշխատանքը սկսելու համար նախ անհրաժեշտ էր ծանոթանալ Միջնադարյան քաղաքների կառուցվածքին: Սովորողները տեղեկություններ են հավաքել միջնադարյան Հայաստանի քաղաքների մասին (գրքեր, հոդվածներ, տեսանյութեր):Դիտել են կարճ տեսանյութեր թեմայի վերաբերյալ:Այնուհետև բաժանվել են 2խմբի՝ բաղկացած 5 և 6 հոգուց:Նրանց տրվել է հստակ հրահանգ՝ ուսումնասիրել Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունը:Խմբերը պետք է ձեռք բերած գիտելիքների հիման վրա ստեղծեին քաղաքի մոդելային մանրակերտ: Ակտիվ հետազոտական և պրպտողական գործունեության ընթացքում սովորողները հավաքեցին մեծ քանակությամբ տեսական տեղեկություններ թեմայի վերաբերյալ/պատմական տարբեր աղբյուրներից,համացանցից/ :

Անհրաժեշտություն առաջացավ այցելելու Երևան քաղաքի պատմության թանգարան, որտեղ սովորողները տեսան Երևան քաղաքի մանրակերտը,բանախոսից լսեցին մանրամասներ քաղաքաշինության,դրա պաշտպանական,մշակութային ,սոցիալական դերի մասին : Այնուհետև այցելեցին Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ արդի ժամանակների եկեղեցաշինությանը ծանոթանալու և միջնադարյան եկեղեցաշինության հետ համեմատելու համար:Շրջեցին քաղաքամայր Երևանով:Օրը հագեցած էր և տպավորություններով լի: Արդեն իսկ կանխորոշված էր նախագծի վերջնարդյունքը՝ ստեղծել քաղաքի մոդելային մակետ:

Իրենց ստեղծած քաղաքը սովորողներն անվանեցին «Արեգաբերդ»: Պատշաճորեն և մանրամասնությամբ ներկայացնելով իրեն աշխատանքի ընթացքը՝ սովորողներն ասելիքն ամփոփեցին «Արեգաբերդ» քաղաքի կառուցման մասին իրենց ստեղծած ավանդապատումով,որն էլ զետեղված էր QR կոդի տակ:

Նախագիծը հնարավորություն տվեց սովորողներին ձեռք բերելու արժեքավոր տեղեկություններ ,ստեղծագործական հմտություններ և զարգացնելու մի շարք կարողունակություններ՝ սովորել սովորելու, լեզվական գրագիտություն,մշակութային, մեդիա,ինքնաճանաչման,տնտեսագիտական։ Շնորհակալություն :